



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-2-Ո-5
2011թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՔԸ ԼՐԱՆԱԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահությամբ՝

Ա. Մկրտումյանի

մասնակցությամբ ԱԽ անդամներ՝

*Վ. Արեյանի, Գ. Բաղիրյանի,
Կ. Բաղդասարյանի, Ռ. Բարսեղյանի,
Տ. Բարսեղյանի, Ա. Թումանյանի,
Գ. Խանդանյանի, Ա. Խաչատրյանի,
Մ. Մակյանի, Մ. Մարտիրոսյանի,
Հ. Փանոսյանի, Ս. Օհանյանի*

քարտուղարությամբ՝

Ն. Գաբրիելյանի

2011 թվականի փետրվարի 11-ին քաղաք Երևանում՝ Արդարադատության խորհրդի նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հայկ Հովհաննիսյանի լիազորությունները՝ պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ դադարեցնելու վերաբերյալ հարցը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով, 4-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց

Առաջարկել Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ 2011 թվականի փետրվարի 13-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հայկ Հովհաննիսյանի լիազորությունները՝ պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ